«ԱԶԴԱԿ» 30 ՀՈԿՏ.1997

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԿԵԱՆՔ

# Արամ Ա. Կաթողիկոս Կը Շարունակէ Իր Այցելութիւնները Նիւ Ինկլընտի Մէջ

(Շար. Առաջին էջէն)
մեծ թիւով ազգայիններու ներկայութեան, ծաղկեպսակներ զետեղեց եւ հոգւոց արտասանեց նահատակներու հոգիներուն համար:

Նոյն գիշերը Վեհափառ Հայրապետը մեկնեցաւ Պոսթըն եւ այցելեց Ուոթըրթաունի Հայ Կրթական եւ Մշակութային Կեդրոնը, ուր տեղի ունեցաւ հաւաք, ներկայութեամբ Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ ընկ. Վիգէն Յովսէփեանի, Հ.Օ.Ա.ի Շրջ. Վարչութեան ատենապետուհի Ալվարդ Պետրոսեանի, եւ շուրջ 500 ներկաներու:

Հայ Կեդրոնին մէջ խօսք առին մանկավարժ Հէթըր Քրաֆեան, «Զօրեան» հիմնարկի վարիչ տնօրէն Հրաչ Չիլինկիրեան եւ թեմի առաջնորդ Մեսրոպ արք. Աշճեան: Իսկ Վեհափառ Հայրը իր խօսքը սկսաւ յայտնելով, որ հայ ժողովուրդի կեանքէն ներս երկու Ս. Աթոռներու գոյութիւնը յառաջ եկած է պատմա-քաղաքական անկինադարձային պարագաներու բերումով եւ կարեւորութեամբ նչեց, թէ ինք կը մերժէ հայ ժողովուրդի մէկ հատուածին մէջ գոյութիւն ունեցող այն մտայնութիւնը, թէ հայ եկեղեցին բաժնուած է, եւ հաստատեց, թէ մեր եկեղեցին ու հաւատքը մէկ է:

Անդրադառնալով եկեղեցի-պետութիւն յարաբերութեանց, Վեհափառը յայտնեց, թէ հայ եկեղեցին պետական եկեղեցի չէ, այլ ազգային եկեղեցի եւ իբր այդպիսին չ'արտացոլացներ որեւէ կառավարութեան քաղաքական ուղղուածութիւնը: Այս բոլորով հանդերձ սակայն, եկեղեցին քաղաքական գետնի վրայ ունի իր անժխտելի դերը: Վեհափառը յայտնեց, թէ եկեղեցիներու համաշխարհային Խորհուրդի ճամբով՝ մեր եկեղեցին արդէն իսկ այդ աչխատանքները կը տանի եւ հաստատեց, թէ այնքան ատեն, որ հայ ժողովուրդի արդար իրաւունքները կ'անտեսուին, Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը իր պարտականութեանց ծիրէն ներս առաջնահերթութիւնը պիտի տայ այս հարցին:



Արամ Ա. Կաթողիկոս «Մեսրոպ Մաշտոց»ի շքանշանով կը պարգեւատրէ երաժշտահան Համբարձում Պէրպէրեանը

Իր ելոյթի աւարտին Վեհափառ Հայրը «Մեսրոպ Մաշտոց» շքանշանով պատուեց երաժշտահան Համբարձում Պէրպէրեանը, բանաստեղծ Արմանտը եւ խմբագիր Թաթուլ Սոնենց Փափազեանը:Իսկ «Կիլիկեան Ասպետ»ի շքանշան տուաւ Պոսթընի Ս. Ստեփանոս եկեղեցիին ծառայած Մայքըլ Նաոյն նահանգի միակ ծերակուտական՝ Ճէք Րիտ: Յայտնենք որ Ճէք Րիտ մօտէն ծանօթ է Հայաստանին ու Ղարաբաղին. ան վերջերս յատուկ առաքելութեամբ մը այցելած է Ղարաբաղ: Այս հանդիպումի ընթացքին Վեհափառ Հայրապետը խօսեցաւ գլխաւորաբար Ղարաբաղի հարցին քաղաքական լուծում մը գտնելու անհրաժեշտութեան մասին:

Նոյն գիշերը Փրովիտընսի Հայ համայնքը ի պատիւ Վեհափառ Հայրապետին ճաշկերոյթ մը սարքեց, որուն ներկայ գտնուեցաւ նաեւ ծերակուտական Ճէք Րիտ: Վեհափառ Հայրապետը «Կիլիկեան Իշխան»ի շքանշանով պարգեւատրեց ազգային բարերար Վարդգէս Մարգարեանը:

Իսկ Երեքշաբթի, Հոկտեմբեր 28ին, Վեհափառ Հայրապետի Պոսթըն այցելութեան յանձնախումբի նախաձեռնութեամբ, նախաճաշ-հանդիպում մը տեղի ունեցաւ Քէմպրիճի Ռոյըլ Սոնէսթա պանդոկին մէջ:

Պաշտօնական հիւրերու շարքին էին Վատիկանի մօտ ԱՄՆի նախկին դեսպան եւ Պոսթընի նախկին քաղաքապետ Ռէյմընտ Ֆլին, եկեղեցիներու համաշխարհային Խորհուրդի կողմէ եպիսկոպոս Քրիթըր Սթէնտալ, Մասաչուսէցի նահանգային ծերակուտական Ռոպըրտ Թրաւըն, Նահանգային ներկայացուցչական տան անդամներ Րէյչըլ Գարրիէլեան եւ Փիթըր Քուձուեան: